

Այնֆեսարիմ՝ «աղբիւր այգիի»։ Հաւանական է նաեւ որ նոյն  
 ԸԼԼայ Բեքֆորդին հետ, որ դարձեալ կը յիշուի Ա. Թագ. է. 11-ի  
 մէջ։ Այս տեղւոյն արդի գիւղին մօտ, գլխաւորաբար լերան կո-  
 դին վրայ, կը գտնուէին հրէական գերեզմաններ, որ կ'ապա-  
 ցուցանեն այս վայրերուն հնութիւնը։ Այնքեարիմը Ս. Յով-  
 հաննէս Մկրտչի աւանդական հայրենիքն է. հետեւաբար սս-  
 տուածաշնչական քաղաք մը, որ գոյութիւն ունէր Աւետաց  
 երկրին Իսրայելացոց գրաւումէն յառաջ, եւ սն դադրած չէ  
 երբեք դեր մը կատարելէ Իսրայելի պատմութեան մէջ։ Դուկ.  
 Ա. 39ի մէջ կան հետեւեալ խօսքերը. «Յարուցեալ Մարիամ յա-  
 ւուրսն յայնոսիկ՝ գնաց ի լեռնակողմն փութապէս ի քաղաքն  
 Յուզայ. եւ եմուտ ի տուն Չաքարիայ...»։ Այս խօսքերուն  
 մէջ յիշուած «լեռնակողմը» վերոգրեալ Այնքեարիմ քաղաքը  
 կ'իմացուի, ինչպէս որ կ'ապացուցանէ Ս. Գերեզմանի կանոնի-  
 կոս՝ Երուսաղէմոցի Յովհաննէս Մարթա ծանօթ պաղեստինա-  
 գէտը իր հնախօսական մէկ գրուածին մէջ զոր հոս կ'ամփո-  
 փենք։ Ան կը գրէ թէ 1253ին, Ասատ Իպն Ասուլ՝ Խպտի ան-  
 ուսնի մատենագիր մը կը ձեռնարկէ չորս Աւետարանաց արա-  
 բերէն քննական թարգմանութեան մը. ինչպէս որ ինքն ալ կը  
 պատմէ, այս նպատակին համար կը զործածէ բազմաթիւ յու-  
 նարէն, արաբերէն և խպտերէն օրինակներ։ Յիշեալ կանոնիկոսը  
 1884ին, Խպտոց Երուսաղէմի Ս. Գէորգ վանքին մէջ կը գտնէ  
 Իպն էլ Ասուլի աշխատութեան ամբողջ մէկ օրինակը, ընդօրի-  
 նակուած 1359 ին. այդ թարգմանութեան մէջ նշանակուած է  
 թանկագին ապացոյց մը հաստատող թէ Այնքեարիմը Յովհաննէս  
 Մկրտչի հայրենիքն էր։ Դուկասի վերոյիշեալ համարը՝ «Յարուցեալ  
 Մարիամ յաւուրսն յայնոսիկ գնաց ի լեռնակողմն փութապէս»  
 դնելէ յետոյ, Իպն էլ Ասուլ լուսանցքին վրայ կը գրէ թէ՛ խպտի և  
 արաբ թարգմանութեանց ձեռագիրները, լեռնակողմն (In-montana)  
 բառին տեղ կը դնեն Այնֆեսարիմ։ Կանոնիկոսը՝ այս ծանօթու-  
 թիւնը յիշելէ զկնի կը յարէ թէ ինքն հաստատած է այս պարա-  
 փան արաբերէն ձեռագրի մը մէջ, որ կը գտնուի Երուսաղէմի  
 Խպտիներու մօտ, 1326ին ընդօրինակուած Թովմաս Սայեղի կող-  
 մէն. այս թարգմանութիւնը, ինչպէս գրած է ընդօրինակողը,  
 կատարած է յունարէն ընագրի մը վրայէն. Դուկ. Ա. 39 հա-  
 մարին խօսքերը՝ ոչ թէ՛ լուսանցքին վրայ, այլ նոյն իսկ ընա-